**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**<<ՆԱՐԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ**

---

**ՀՀ ք. Երևան Աճառյան 2-րդ նրբ., 2-րդ շենք** **հեռ. (+37410) 61-70-90**

____ 8074 **<<14>> նոյեմբերի 2014թ.**

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

**Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/16-1**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ, ք. Երևան Աճառյան 2-րդ նրբ., 2-րդ շենք հասցեով, մինչև **2014թ. նոյեմբերի 25-ը**, ժամը 11:30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ, ք. Երևան Աճառյան 2-րդ նրբ., 2-րդ շենք հասցեով, **2014թ նոյեմբերի 25-ին, ժամը 11:30-ին**:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ -ի կարիքների համար՝ **Բժշկական նշանակութան սարքավորումներ և գործիքների ձեռքբերումը**:

ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ -ի կարիքների համար՝ **Բժշկական նշանակութան սարքավորումներ և գործիքների** մատակարարման (որոնք կազմված են՝ 8 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 10 հավելվածում: